ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 02/2025/Վ/Վ

ԹԱԳՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 12 մայիսի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի տեղակալ Թագուհի Հակոբյանի նկատմամբ 2025 թվականի փետրվարի 10-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 02/2025/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

Ի. Նախապատմություն

1.1. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2025 թվականի

փետրվարի 3-ին Հանձնաժողով մուտքագրված՝ Աստղիկ Ռուբենի Բալասանյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում), 2025 թվականի փետրվարի 10-ին կայացրել է Վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 02/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ՝ Հարուցման որոշում):

1.2. Ըստ Դիմումի՝ Տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթներից մեկի շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 01/19425-2024 գրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարից հայցվել է տրամադրել ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1744-Ն որոշման 4-րդ հավելվածով սահմանված՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկում ներառված վարակիչ հիվանդությունների (ներառյալ՝ հեպատիտ Ց, Բ, տուբերկուլոզ) բացառման համար նշված որոշման համաձայն Միասնական սոցիալական ծառայության կողմից «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն) ուղեգրված անձանց ուղեգրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի լուսապատճենները: Ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավարի՝ 2024 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 01/19425-2024 գրության՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գրությամբ տեղեկացվել է, որ Կազմակերպություն անձանց ուղեգրումը կազմակերպվել է՝ հիմք ընդունելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 169-Ն և Առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 55-Ն համատեղ հրամանի հավելվածով և ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 6-ի N 88-Ն հրամանի 17-րդ հավելվածով հաստատված՝ Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, համայնքային փոքր տների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների խնամքի համար դիմած անձի բժշկական քարտի ձևերը: Տրամադրված ձևերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ լիազոր մարմնի կողմից հաստատված այդ փաստաթղթերում բացակայում է հեպատիտ Ց, Բ հիվանդությունների բացառման վերաբերյալ պահանջը, որը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

Դիմումի համաձայն՝ նշվածը կարգավորելու և հետագայում նմանատիպ կազմակերպություններում համաճարակային ռիսկը բացառելու և Տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով Ա.Բալասանյանը նախապատրաստել է Առողջապահության նախարարին ուղղված գրության նախագիծ (այսուհետ՝ Գրության նախագիծ)՝ նկարագրելով համաճարակային խնդիրը և դրա կարգավորման անհրաժեշտությունը:

Սակայն, ըստ Դիմումի, պաշտոնական էլեկտրոնային փոստով Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Թագուհի Հակոբյանին ներկայացված Գրության նախագիծը վերջինիս կողմից մերժվել է՝ նշելով, որ դիմումատուն հանգիստ նստի իր տեղը և ինքնագործունեությամբ չզբաղվի, և քանի որ ինքը դրա անհրաժեշտությունը չի տեսնում, գրությունը չի գրվելու:

Ըստ դիմում ներկայացրած անձի՝ նշված խնդրի մասին ինքը տեղեկացրել է Տեսչական մարմնի ղեկավարին 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ, սակայն Տեսչական մարմնի ղեկավարը և նրա տեղակալ Թագուհի Հակոբյանը կոպիտ տոնով նշել են, որ դիմումատուն չի որոշում նշված հարցերը, իրենք են որոշում և եթե որոշեն, ապա կգրեն:

1.3. Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցը 2025 թվականի փետրվարի 12-ին հեռախոսազրույց է ունեցել Աստղիկ Բալասանյանի հետ, որի ընթացքում Ա.Բալասանյանը հայտնել է, որ Դիմումով նկարագրված՝ Գրության նախագծի մերժումը Թագուհի Հակոբյանի կողմից կատարվել է բանավոր: Ա.Բալասանյանը նաև հայտնել է, որ Տեսչական մարմնի գործակարգավարական խորհրդակցությունները ձայնագրվում են:

1.4. Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 01/694-2025 գրությամբ Հարուցման որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկել է Թագուհի Հակոբյանին: Նշված գրությունը Թագուհի Հակոբյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 19-ին (հիմք՝ ALO126606910AM փոստային անդորրագիր):

1.5. Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 01/693-2025 գրությամբ Հարուցման որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկել է Աստղիկ

Բալասանյանին: Նշված գրությունը Աստղիկ Բալասանյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 18-ին (հիմք՝ ALO126606922AM փոստային անդորրագիր):

1.6. 2025 թվականի փետրվարի 25-ին Հանձնաժողով է մուտքագրվել Թագուհի Հակոբյանի դիրքորոշումը:

1.7. 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողով է մուտքագրվել Աստղիկ Բալասանյանի գրությունը, որով նա ներկայացրել է Դիմումով նկարագրված դեպքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ:

1.8. Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/1552-2025 գրությամբ Տեսչական մարմնից պահանջել է ներկայացնել Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ձայնագրությունը և արձանագրությունը: 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրվել է Տեսչական մարմնի թիվ 01/8463-2025 գրությունը, որով չեն ներկայացվել Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ձայնագրությունը և արձանագրությունը:

1.9. Հանձնաժողովը 2025 թվականի մայիսի 6-ի թիվ 01/1903-2025 գրությամբ Տեսչական մարմնից կրկին պահանջել է ներկայացնել Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ձայնագրությունը և արձանագրությունը: Ի պատասխան Հանձնաժողովի գրության՝ Տեսչական մարմնի 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրությամբ նշվել է, որ Տեսչական մարմնում անցկացվող գործակարգավարական հանդիպումները չեն ձայնագրվում, և ներկայացվել է Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական հանդիպման արձանագրությունը:

1.10. Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակիցը 2025 թվականի մայիսի 8-ին, ժամը 14:40-ին հեռախոսազրույց է ունեցել Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության ներկայացուցչի հետ, ով հայտնել է, որ Տեսչական մարմնի գործակարգավարական հանդիպումների անցկացման կարգը նախատեսված չէ որևէ իրավական ակտով:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի փետրվարի 25-ին Հանձնաժողով մուտքագրված գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ Թագուհի Հակոբյանը դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում) է ներկայացրել առ այն, որ.

Իր ողջ աշխատանքային գործունեության ընթացքում, որի մեծ մասն աշխատել է պետական համակարգում, իր կողմից երբևէ որևէ կարգապահական խախտում, այդ թվում՝ վարքագծի կանոնների խախտում, թույլ չի տրվել, երբևէ կարգապահական տույժի չի ենթարկվել:

Մինչ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելը 6 տարի՝ 01.12.2017-18.09.2023թթ., Տեսչական մարմնում զբաղեցրել է որակի ապահովման վարչության պետի պաշտոնը: Այդ ընթացքում, ի թիվս օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների, իրականացրել է ներքին հսկողություն Տեսչական մարմնում էթիկայի կանոնների պահպանման վիճակի նկատմամբ: Իրականացնելով այդ գործառույթը՝ պարտավորվածություն է ունեցել առաջնահերթ ինքը պահպանել բարեվարքության բոլոր կանոնները, լինել օրինակելի. պահպանել է կանոնները մինչ այդ ու շարունակում է պահպանել մինչ օրս:

Դիրքորոշմամբ նշվել է, որ ի պաշտոնե վարքագծի կանոնների պահպանման գործընթացին ունեցած՝ Թ.Հակոբյանի անմիջական մասնակցությունն առնվազն ենթադրում է այդ կանոնների պահպանման կարևորությունն իր համար:

Դիմումով ներկայացրած՝ Թ. Հակոբյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտման առնչությամբ Դիրքորոշմամբ նշվել է, որ նման դեպք տեղի չի ունեցել, հետևաբար չի կարող որևէ մեկնաբանություն կամ պարզաբանում ներկայացնել:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Թ. Հակոբյանն Աստղիկ Բալասանյանի նկատմամբ մշտապես եղել է բարեհամբույր, հարգալիր, ցանկացած դեպքում սիրով աջակցել է իրեն ոչ միայն իր կողմից համակարգման ոլորտներին առնչվող, այլ նաև այլ հարցերում, որի համար Աստղիկ Բալասանյանը մշտապես իր շնորհակալությունն է հայտնել՝ ընդգծելով Թ.Հակոբյանի արագ արձագանքելու և հեռախոսազանգերին

պարտադիր պատասխանելու հատկությունը: Հետևապես, Թ. Հակոբյանի համար, ըստ Դիրքորոշման, բացարձակ անհասկանալի են Հանձնաժողովին դիմում ներկայացնելու՝ Ա.Բալասանյանի դրդապատճառները:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Թ. Հակոբյանին նաև հասկանալի չէ, թե ինչո՞ւ է Աստղիկ Բալասանյանը հիմա բարձրաձայնում ամիսներ առաջ տեղի ունեցած ենթադրյալ դեպքի մասին, երբ Դիմումում նշված վարչարարությունն իրականացվել է 2024 թվականի սեպտեմբեր ամսվա սկզբին, իսկ Աստղիկ Բալասանյանի լիազորությունները դադարեցվել են 2024 թվականի հոկտեմբերի 14-ին: Ըստ Դիրքորոշման՝ եթե նման դեպք տեղի ունեցած լիներ, Ա.Բալասանյանը կարող էր այդ հարցը բարձրացնել հենց այդ պահին, և կատարվածին համարժեք գնահատական կտրվեր հենց այդ ժամանակ:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1. ՀՀ վարչապետի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի N 955-Ա որոշման համաձայն՝ Թագուհի Հակոբյանը նշանակվել է Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ:

3.2. Աստղիկ Բալասանյանը 2025 թվականի փետրվարի 12-ին Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակցի հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնել է, որ Դիմումով նկարագրված՝ Ա.Բալասանյանի ներկայացրած գրության նախագծի մերժումը Թագուհի Հակոբյանի կողմից կատարվել է բանավոր: Ա.Բալասանյանը նաև հայտնել է, որ Տեսչական մարմնի գործակարգավարական խորհրդակցությունները ձայնագրվում են:

3.3. Աստղիկ Բալասանյանը 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դիմումի 5-րդ կետում նշել եմ, որ. «… Նշված խնդրի մասին Տեսչական մարմնի ղեկավարին տեղեկացրել եմ 2024 թվականի սեպտեմբերի 10-ին տեղի ունեցած գործակարգավարական խորհրդակցության ժամանակ: Սակայն, Տեսչական մարմնի

ղեկավարը և նրա տեղակալը, կոպիտ տոնով նշեցին, որ «դու չես որոշում նշված հարցերը, մենք ենք որոշում և եթե որոշենք, ապա կգրենք:»:

Նշված խնդրի կարգավորման ուղղությամբ՝ մինչև 2024 թվականի հոկտեմբերի 14-ը ներառյալ, Տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալ Թագուհի Հակոբյանի կողմից քայլեր չեն ձեռնարկվել՝ համաճարակային մեծ ռիսկ ունեցող խնդիրը լուծելու ուղղությամբ:»

Վերոգրյալ առերևույթ խախտման առկայության հիմքով վարույթ է հարուցվել միայն Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի նկատմամբ, իսկ Տեսչական մարմնի ղեկավարի մասով՝ վարույթ հարուցելու կամ այն մերժելու մասին, անդրադարձը բացակայում է Որոշման և 1-ին, և 2-րդ, և 3-րդ բաժիններում:»:

3.4. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ 01/8463-2025 և 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրությունների ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

3.4.1. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ 01/8463-2025 գրությամբ չեն ներկայացվել սույն վարույթին վերաբերելի տեղեկություններ:

3.4.2. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրության համաձայն՝ Տեսչական մարմնում անցկացվող գործակարգավարական հանդիպումները չեն ձայնագրվում: Գրությամբ նաև նշվել է, որ Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական հանդիպման ժամանակ որևէ մեկի նկատմամբ չի ցուցաբերվել անհարգալից, խտրական կամ ոչ օբյեկտիվ վերաբերմունք: Ըստ գրության՝ նման իրավիճակների ի հայտ գալու դեպքում առկա հարցերի պարզաբանումները և վերլուծությունը չէին թողնվի անհետևանք՝ հաշվի առնելով հանրային ծառայողների վարքագծի կանոնների խստիվ պահպանման իմպերատիվ պահանջը: Գրությամբ նաև նշվել է, որ Տեսչական մարմնում բոլոր աշխատողները միմյանց նկատմամբ ցուցաբերում են հարգալից վերաբերմունք:

3.4.3. Տեսչական մարմնի՝ 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրությանը կից ներկայացվել է Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի

գործակարգավարական խորհրդակցության արձանագրությունը, որի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ այն չի պարունակում Աստղիկ Բալասանյանի և Թագուհի Հակոբյանի միջև Դիմումով ներկայացված միջադեպի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ արձանագրությամբ չի նշվում այն մասին, որ Ա.Բալասանյանը գործակարգավարական հանդիպման ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարին տեղեկացրել է Դիմումով նշված խնդրի վերաբերյալ:

3.5. Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության ներկայացուցիչը 2025 թվականի մայիսի 8-ին, ժամը 14:40-ին Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակցի հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնել է, որ Տեսչական մարմնի գործակարգավարական հանդիպումների անցկացման կարգը նախատեսված չէ որևէ իրավական ակտով:

IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածով սահմանվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և նախատեսվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:

2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հարգում են իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը:»:

4.2. Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),

համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

4.3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:»:

4.4. Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ

պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն՝ կանոնագիրքը հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների համախումբ է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:

4.5. Վարքագծի կանոնագրքի 36-րդ կետի համաձայն.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:»:

4.6. Վարքագծի կանոնագրքի 37-րդ կետի համաձայն.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:»:

4.7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)»:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումները

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում գնահատման ենթակա՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Թագուհի Հակոբյանին վերագրվող առերևույթ խախտումը կայանում է նրանում, որ վերջինս, ըստ Դիմումի, դրսևորել է առերևույթ ոչ բարեկիրթ, ոչ քաղաքավարի, չզսպված և անհարգալից վերաբերմունք դիմումատու Աստղիկ Ռուբենի Բալասանյանի նկատմամբ՝ մասնավորապես մերժելով նրա ներկայացրած Գրության նախագիծը՝ նշելով, որ Ա.Բալասանյանը «հանգիստ նստի իր տեղը և ինքնագործունեությամբ չզբաղվի», ինչպես նաև գործակարգավարական խորհրդակցության ընթացքում կոպիտ կերպով արձագանքելով Ա.Բալասանյանին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Նկատի ունենալով, որ Ա.Բալասանյանի հետ զրույցի շրջանակներում, ինչպես նաև Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական հանդիպման ընթացքում Թագուհի Հակոբյանի կողմից Ա.Բալասանյանի նկատմամբ ենթադրյալ ոչ բարեկիրթ, ոչ քաղաքավարի, չզսպված և անհարգալից վերաբերմունք դրսևորելու հանգամանքը Թ.Հակոբյանի համար ոչ բարենպաստ փաստական

հանգամանք է՝ դրա ապացուցման պարտականությունը կրում է Հանձնաժողովը՝ որպես վարույթն իրականացնող վարչական մարմին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված հանգամանքները հաստատվել են միայն Ա.Բալասանյանի ներկայացրած տեղեկություններով, մասնավորապես՝

1) Դիմումով,

2) Ա.Բալասանյանի հետ 2025 թվականի փետրվարի 12-ին Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատակցի հեռախոսազրույցով, որի ընթացքում Ա.Բալասանյանը նշել է, որ Թ.Հակոբյանն իր նկատմամբ կոպիտ վարքագիծ է դրսևորել բանավոր հաղորդակցության ընթացքում: Ա. Բալասանյանը նաև հայտնել է, որ Տեսչական մարմնի գործակարգավարական հանդիպումները ձայնագրվում են,

3) 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողովում մուտքագրված՝ Ա. Բալասանյանի գրությամբ, որով վերջինս վերահաստատել է Դիմումով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում Թ. Հակոբյանը և Տեսչական մարմնի ղեկավար Ս. Սարգսյանը կոպիտ տոնով նշել են, որ «դու չես որոշում նշված հարցերը, մենք ենք որոշում և եթե որոշենք, ապա կգրենք»:

Միաժամանակ, Թ. Հակոբյանը սույն վարույթի շրջանակներում ներկայացրած Դիրքորոշմամբ ժխտել է իր կողմից Ա. Բալասանյանի նկատմամբ ոչ հարգալիր վարքագիծ դրսևորելու հանգամանքը՝ նշելով, որ նման դեպք տեղի չի ունեցել, հետևաբար նա չի կարող դեպքի առնչությամբ որևէ մեկնաբանություն կամ պարզաբանում ներկայացնել: Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Թ. Հակոբյանը Ա. Բալասանյանի նկատմամբ մշտապես եղել է բարեհամբույր, հարգալիր, ցանկացած դեպքում սիրով աջակցել է իրեն ոչ միայն իր կողմից համակարգման ոլորտներին առնչվող, այլ նաև այլ հարցերում, որի համար Աստղիկ Բալասանյանը մշտապես իր շնորհակալությունն է հայտնել, ուստի Թ. Հակոբյանի համար բացարձակ անհասկանալի են Հանձնաժողովին դիմում ներկայացնելու՝ Ա. Բալասանյանի դրդապատճառները:

Ինչպես Գրության նախագիծը մերժելու ընթացքում, այնպես էլ 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Թ. Հակոբյանի կողմից Ա. Բալասանյանի նկատմամբ կոպիտ վերաբերմունք դրսևորելու հանգամանքները չեն հաստատվել նաև վարույթի շրջանակներում ձեռքբերված այլ ապացույցներով: Մասնավորապես, Տեսչական մարմնի՝ 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրության համաձայն՝ Տեսչական մարմնում անցկացվող գործակարգավարական հանդիպումները չեն ձայնագրվում: Հանձնաժողովի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ Տեսչական մարմնի գործակարգավարական խորհրդակցությունները տեսագրելու, ձայնագրելու պահանջ, սահմանված չէ նաև գործակարգավարական խորհրդակցությունների արձանագրման ընթացակարգը: Նշված հանգամանքը հաստատվել է նաև Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության ներկայացուցչի հետ 2025 թվականի մայիսի 8-ին կայացած հեռախոսազրույցի արդյունքներով, որի ընթացքում վերջինս հայտնել է, որ Տեսչական մարմնի գործակարգավարական հանդիպումների անցկացման կարգը նախատեսված չէ որևէ իրավական ակտով:

Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական հանդիպման արձանագրության ուսումնասիրմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ այն չի ներառում որևէ տեղեկատվություն՝ Ա. Բալասանյանի կողմից հանդիպման ընթացքում նրա մշակած Գրության նախագծի կամ Թ. Հակոբյանի ոչ հարգալիր վարքագծի վերաբերյալ Տեսչական մարմնի ղեկավարին հայտնելու մասին: Նմանապես, արձանագրությամբ նշված չէ նաև Տեսչական մարմնի ղեկավարի կամ Թ. Հակոբյանի կողմից Ա. Բալասանյանի նկատմամբ ոչ հարգալիր վերաբերմունքի դրսևորման մասին:

Տեսչական մարմնի՝ 2025 թվականի մայիսի 7-ի թիվ 01/9271-2025 գրությամբ սույն վարույթի շրջանակներում քննարկման ենթակա առերևույթ խախտման առկայությունը ևս ժխտվել է: Մասնավորապես, նշված գրությամբ նշվել է, որ Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական հանդիպման ժամանակ որևէ մեկի նկատմամբ չի ցուցաբերվել անհարգալից, խտրական կամ ոչ օբյեկտիվ վերաբերմունք:

Նկատի ունենալով, որ Գրության նախագիծը մերժելիս Թ. Հակոբյանի ենթադրյալ վարքագիծը տեղի է ունեցել Ա. Բալասանյանի հետ մասնավոր զրույցի ընթացքում, որի առկայությունը չի հաստատվել նաև 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության վերաբերյալ սույն վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով՝ Հանձնաժողովը զրկված է նշված միջադեպի վերաբերյալ Ա. Բալասանյանի և Թ. Հակոբյանի վկայություններից բացի այլ ապացույցների ձեռքբերման հնարավորությունից:

Նմանապես, վարույթի շրջանակներում ձեռք չեն բերվել 2024 թվականի սեպտեմբերին 10-ի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում Թ. Հակոբյանի կողմից Վարքագծի կանոնագրքին ոչ համապատասխան վարքագիծ դրսևորելու վերաբերյալ բավարար ապացույցներ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեին Թ. Հակոբյանի կողմից Գրության նախագիծը մերժելիս, ինչպես նաև Տեսչական մարմնի՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում Ա. Բալասանյանի նկատմամբ ոչ հարգալիր վերաբերմունք ցուցաբերելու հանգամանքը:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Թ. Հակոբյանի կողմից ոչ հարգալիր վերաբերմունք ցուցաբերելու հանգամանքն ապացուցված չէ, ուստի վարքագծի կանոնների խախտումը բացակայում է:

Աստղիկ Բալասանյանի՝ 2025 թվականի մարտի 17-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ նաև նշվել է, որ Հանձնաժողովի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 10-ին դրսևորված վարքագծի առնչությամբ վարույթ է հարուցվել միայն Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Թ. Հակոբյանի նկատմամբ, իսկ Տեսչական մարմնի ղեկավարի մասով անդրադարձը բացակայել է Հարուցման որոշմամբ: Հանձնաժողովն ընդգծում է, որ վարքագծի կանոնի առերևույթ խախտման առկայությունն արձանագրելու համար անհրաժեշտ է, որ դիմումով կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներով ներկայացված տեղեկատվությունը

որոշակի հստակությամբ նկարագրեն վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման բովանդակությունը:

Այս առումով, Դիմումով նշվել է, որ Տեսչական մարմնի ղեկավարը և նրա տեղակալը «կոպիտ տոնով նշեցին, որ դու չես որոշում նշված հարցերը, մենք ենք որոշում և եթե որոշենք, ապա կգրենք»: Հանձնաժողովն արձանագրում է, որ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից նշված արտահայտության ենթադրյալ գործածումը Հարուցման որոշմամբ համարվել է վարքագծի կանոնի առերևույթ խախտում՝ դիտարկելով այն Թ. Հակոբյանի և Ա. Բալասանյանի միջև զրույցի վերաբերյալ Դիմումով ներկայացված փաստական հանգամանքների հետ համադրության մեջ: Ինչ վերաբերում է Տեսչական մարմնի ղեկավարի վարքագծին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ «դու չես որոշում նշված հարցերը, մենք ենք որոշում» արտահայտության կիրառումն ինքնին չի կարող համարվել ոչ հարգալիր վերաբերմունքի դրսևորում, իսկ պարզապես նշելը, որ պետական պաշտոն զբաղեցնող անձը «կոպիտ տոնով» է արձագանքել դիմում ներկայացնող անձին, բավարար հստակ կամ որոշակի կերպով չի նկարագրում պետական պաշտոն զբաղեցնող անձի վարքագիծը, որպեսզի այլ փաստական հանգամանքների բացակայության պայմաններում հնարավոր լինի արձանագրել վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայությունը: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հարկ է համարում նաև ընդգծել, որ սույն վարույթի շրջանակներում 2024 թվականի սեպտեմբերի 10-ի գործակարգավարական հանդիպման վերաբերյալ ձեռք չեն բերվել նաև բավարար տվյալներ, որոնք կհաստատեին նշված հանդիպմանը Ս.Սարգսյանի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայությունը:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Թագուհի Հակոբյանի կողմից վարքագծի կանոնների խախտման բացակայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Թագուհի Հակոբյանին և Աստղիկ Բալասանյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ